ՇԴ/0020/01/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1 մարտի 2024 թվական ք.Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ

մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ

Դ.ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻ

Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ՇԴ/0020/01/24 քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 19-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2024 թվականի հունվարի 10-ին Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Էդգար Մերուժանի Եղիգարյանի և Էդուարդ Մանուկի Միրզոյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 104-րդ

հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 11-րդ կետերով թիվ 18-0341-23 (ՇԴ/0020/01/24) քրեական վարույթը:

Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի հունվարի 12-ին որոշում է կայացրել թիվ ՇԴ/0020/01/24 քրեական վարույթն ստանձնելու և 2024 թվականի հունվարի 26-ին նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի հունվարի 26-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ ընդդատության Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին:

3. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի փետրվարի 19-ին որոշում է կայացրել թիվ ՇԴ/0020/01/24 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի փետրվարի 26-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. 2023 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ Էդգար Մերուժանի Եղիգարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 11-րդ կետերով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ *«նա 2022 թվականի ապրիլի 15-ին՝ ժամը 19-ի սահմաններում, ԱՀ Ասկերանի շրջանի Նախիջևանիկ գյուղում գտնվող իրենց հարկացված տանը և նույն տան դիմացի բակում, Էդուարդ Մանուկի Միրզոյանի հետ համատեղ, կենցաղային հարցի շուրջ վիճաբանության մեջ է մտել իրենց հետ նույն տանը բնակվող Ալբերտ Ռաֆիկի Թորոսյանի և Ռազմիկ Ռաֆիկի Կարապետյանի հետ, և այդ ընթացքում՝ իր և Է.Մ.Միրզոյանի հասցեին սեռական բնույթի հայհոյանքներ հնչեցնելուց առաջացած զայրույթի շարժառիթով, չկոնկրետացված դիտավորությամբ՝ նախատեսելով իր գործողությունների*

հետևանքով Ալբերտ Ռաֆիկի Թորոսյանին ապօրինաբար կյանքից զրկելու իրական հնարավորությունը, չցանկանալով այդ հետևանքները, բայց գիտակցաբար թույլ տալով դրանք՝ ձեռքերով և տեղում վերցրած փայտի կտորով, մեկը մյուսին փոխլրացնելով, բազմաթիվ հարվածներ է հասցրել վերջինիս և Ռազմիկ Ռաֆիկի Կարապետյանի մարմնի տարբեր մասերին՝ այդ թվում կյանքի համար կենսականորեն կարևոր օրգաններին, պատճառելով Ալբերտ Ռաֆիկի Թորոսյանին՝ կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնասվածքներ, որի հետևանքով գանգի, կրծքավանդակի փակ, բութ վնասվածքներից առաջացած հեմոռագիկ-տրավմատիկ շոկից վերջինս տեղում մահացել է, իսկ Ռազմիկ Ռաֆիկի Կարապետյանին՝ կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնասվածքներ, որն արտահայտվել է բաց բութ գանգուղեղային վնասվածքով գլխուղեղի կարևոր կենսական ֆունկցիաների սուր խանգարման զարգացումով: Այնուհետև, հաջորդ օրը՝ ապրիլի 16-ին, ժամը 21-ի սահմաններում, նույն տանը Էդուարդ Մանուկի Միրզոյանի հետ նախնական համաձայնությամբ, խմբով, նախորդ օրը կատարած Ալբերտ Ռաֆիկի Թորոսյանի սպանությունը թաքցնելու նպատակով Ռ.Ռ.Կարապետյանին ապօրինաբար կյանքից զրկելու ուղղակի դիտավորությամբ, ինքը պահելով Ռ.Ռ.Կարապետյանի ոտքերից, իսկ Է.Մ.Միրզոյանը թիկունքից պոլիէթիլենային տոպրակը հագցնելով Ռ.Ռ.Կարապետյանի գլխին, երկու ձեռքով սեղմած պահելով ու փակելով շնչառական ուղիները՝ խեղդել է Ռ.Ռ.Կարապետյանին, ինչի արդյունքում վերջինս տեղում մահացել է»[1]:

2023 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ Էդուարդ Մանուկի Միրզոյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 11-րդ կետերով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ *«նա 2022 թվականի ապրիլի 15-ին՝ ժամը 19-ի սահմաններում, ԱՀ Ասկերանի շրջանի Նախիջևանիկ գյուղում գտնվող իրենց հատկացված տանը և նույն տան դիմացի բակում, Էդգար Մերուժանի Եղիգարյանի հետ համատեղ, կենցաղային հարցի շուրջ վիճաբանության մեջ է մտել իրենց հետ նույն տանը բնակվող Ալբերտ Ռաֆիկի Թորոսյանի և Ռազմիկ Ռաֆիկի Կարապետյանի հետ և այդ ընթացքում իր և Է.Մ.Եղիգարյանի հասցեին սեռական*

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 5, թերթեր 31-32:

բնույթի հայհոյանքներ հնչեցնելուց առաջացած զայրույթի շարժառիթով, չկոնկրետացված դիտավորությամբ՝ նախատեսելով իր գործողությունների հետևանքով Ալբերտ Ռաֆիկի Թորոսյանին ապօրինաբար կյանքից զրկելու իրական հնարավորությունը, չցանկանալով այդ հետևանքները, բայց գիտակցաբար թույլ տալով դրանք՝ ձեռքերով և տեղում վերցրած փայտի կտորով, մեկը մյուսին փոխլրացնելով, բազմաթիվ հարվածներ է հասցրել վերջինիս և Ռազմիկ Ռաֆիկի Կարապետյանի մարմնի տարբեր մասերին՝ այդ թվում կյանքի համար կենսականորեն կարևոր օրգաններին, պատճառելով Ալբերտ Ռաֆիկի Թորոսյանին՝ կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնասվածքներ, որի հետևանքով գանգի, կրծքավանդակի փակ, բութ վնասվածքներից առաջացած հեմոռագիկ-տրավմատիկ շոկից վերջինս տեղում մահացել է, իսկ Ռազմիկ Ռաֆիկի Կարապետյանին՝ կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնասվածքներ, որն արտահայտվել է բաց բութ գանգուղեղային վնասվածքով գլխուղեղի կարևոր կենսական ֆունկցիաների սուր խանգարման զարգացումով: Այնուհետև, հաջորդ օրը՝ ապրիլի 16-ին, ժամը 21-ի սահմաններում, նույն տանը, Էդգար Մերուժանի Եղիգարյանի հետ նախնական համաձայնությամբ, խմբով, նախորդ օրը կատարած Ալբերտ Ռաֆիկի Թորոսյանի սպանությունը թաքցնելու նպատակով Ռ.Ռ.Կարապետյանին ապօրինաբար կյանքից զրկելու ուղղակի դիտավորությամբ, Էդգար Մերուժանի Եղիգարյանը պահելով Ռ.Ռ.Կարապետյանի ոտքերից, իսկ ինքը թիկունքից պոլիէթիլենային տոպրակը հագցնելով Ռ.Ռ.Կարապետյանի գլխին, երկու ձեռքով սեղմած պահելով ու փակելով շնչառական ուղիները՝ խեղդել է Ռ.Ռ.Կարապետյանին, ինչի արդյունքում վերջինս տեղում մահացել է»[2]:

6. Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի հունվարի 26-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Վարույթի ընդդատության հարցի քննարկման շրջանակներում մեղադրյալ Է.Եղիգարյանի պաշտպան Ժորա Պետրոսյանը հայտնեց, որ սույն քրեական գործն ընդդատյա չէ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, միջնորդեց այն փոխանցել ըստ ընդդատության՝ պատճառաբանելով, որ ենթադրյալ հանցանքը կատարվել է այլ պետության տարածքում, ուստի ՀՀ*

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 5, թերթեր 34-35:

քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգավորման համաձայն՝ վարույթն ընդդատյա է մեղադրյալների վերջին հաշվառման կամ բնակության վայրի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Պաշտպանը նշեց նաև, որ մեղադրյալներ Է.Եղիգարյանի և Է.Միրզոյանի հաշվառման և բնակության վերջին հասցեները պարզված են, ուստի մինչդատական վարույթն իրականացրած նախաքննական մարմնի նստավայրի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից սույն քրեական գործը քննելու իրավաչափ հիմքեր առկա չեն: Պաշտպանը գտավ, որ վարույթը ենթակա է փոխանցման կա՛մ Արմավիրի մարզի կա՛մ Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Է.Միրզոյանի պաշտպան Կ.Գրեյանը և մեղադրյալները միացան պաշտպան Ժ.Պետրոսյանի դիրքորոշմանն ու միջնորդությանը:

Հանրային մեղադրող Ա.Խաչատրյանը հայտնեց, որ, հաշվի առնելով մեղադրյալների՝ տարբեր մարզերում հաշվառված և փաստացի բնակված լինելու հանգամանքը, մեղադրանքի կողմը գտել է, որ նման պայմաններում վարույթն ընդդատյա է նախաքննությունն իրականացրած մարմնի նստավայրի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Տուժողները նշված հարցի կապակցությամբ դիրքորոշում չհայտնեցին:

(...) Քրեական գործի նյութերի, առաջին հերթին՝ մեղադրյալների նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին կայացված որոշումների և մեղադրական եզրակացության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ մեղսագրվող արարքները կատարվել են Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս՝ այլ պետության տարածքում:

(...) Վերոգրյալի հիման վրա և հաշվի առնելով, որ թիվ ՇԴ/0020/01/24 քրեական գործով նախնական դատաքննության ընթացքում պարզվել է քրեական վարույթը ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը՝ Դատարանը գտնում է, որ նշված

վարույթը պետք է ըստ ընդդատության փոխանցել Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (…)»[3]*:*

7. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի փետրվարի 19-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Սույն քրեական վարույթով նախնական դատալսումների ընթացքում մեղադրյալ Էդուարդ Մանուկի Միրզոյանը Դատարանին հայտնել է, որ մինչև ձերբակալվելը, իր փաստացի վերջին բնակության վայրը հանդիսացել է Արարատի մարզի Ուստան գյուղի Արարատյան փողոցի թիվ 44 տունը, որն ըստ էության Դատարանի համար ի հայտ եկած այնպիսի հանգամանք էր, որը հայտնի չի եղել մինչև նախնական դատալսումներ նշանակելը՝ ընդդատության վեճ բարձրացնելու համար:*

(…)

Իսկ ըստ մեղադրական եզրակացության՝ մեղադրյալ Էդուարդ Միրզոյանը հաշվառված է Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Հայրենյաց փողոցի թիվ 2 տուն հասցեում, ներկայումս հանդիսանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի կալանավոր:

Վերոգրյալի հաշվառմամբ Դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում մեղադրյալ Էդուարդ Միրզոյանի վերջին բնակության վայրը պետք է դիտել Արարատի մարզի Ուստան գյուղի Արարատյան փողոցի թիվ 44 հասցեն:

Անդրադառնալով քրեական վարույթով մյուս մեղադրյալի բնակության հասցեին՝ Դատարանն արձանագրում է, որ քրեական վարույթով մեղադրյալ Էդգար Մերուժանի Եդիգարյանը հաշվառված է Արարատի մարզի Արտաշատ քաղաքի Մյասնիկյան փողոցի 125 տուն հասցեում, բնակվել է այդ հասցեով մինչև մեկ այլ քրեական գործով կալանավորվելը:

Ներկայումս վերջինս մեկ այլ քրեական գործով հանդիսանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի կալանավոր:

Ելնելով վերոգրյալից Դատարանն արձանագրում է, որ մեղադրյալների վերջին բնակությունը եղել է Արարատի մարզը: ՀՀ քրեական դատավարության

---

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 6, թերթեր 53-56:

օրենսգրքի 261-րդ հոդվածի չորրորդ մասի համաձայն՝ այլ պետության տարածքում ենթադրաբար կատարված հանցանքի վերաբերյալ վարույթն ընդդատյա է այն դատարանին, որի դատական տարածքում է գտնվում մեղադրյալի բնակության կամ հաշվառման վերջին վայրը: Տվյալ դեպքում Դատարանին հայտնի է մեղադրյալների բնակության վերջին վայրը և առկա է անհամաձայնություն՝ քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցում:

Դատարանն արձանագրում է նաև, որ ընդդատության հետ կապված վեճը ի հայտ է եկել քրեական գործը վարույթ ստանձնելու և նախնական դատաքննություններ նշանակելուց հետո՝ դատական նիստում, ուստի Դատարանն ընդդատության հետ կապված հարցի կապակցությամբ լսել է նաև կողմերի կարծիքները, և առարկություններ չներկայացնելով վերջիններս ևս միջնորդել են վեճի լուծման համար դիմել Վճռաբեկ դատարանի քրեական պալատին:

Այսպիսով, Դատարանը, վերը նշված պատճառաբանությամբ ու հաշվի առնելով Վճռաբեկ դատարանի վերոգրյալ իրավական դիրքորոշումները, ելնելով ընդդատության պահպանման վերը նշված պահանջներից ու պարզելով, որ ստացված գործն ընդդատյա չէ ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն այն պետք է ըստ ընդդատության ուղարկվի Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Եվ նկատի ունենալով, որ քրեական գործը ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ստացվել է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանից՝ գործն ըստ ընդդատության ուղարկելու որոշմամբ, ապա Դատարանն արձանագրում է, որ առկա է ընդդատության մասին վեճ և վեճը լուծելու համար քրեական վարույթը պետք է ուղարկվի ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատ (…)»[4]:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

[4] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 5, թերթեր 122-127:

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՇԴ/0020/01/24 քրեական վարույթն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[5]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[6]:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(...) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական*

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (...), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (...)

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (...)»[7]*:*

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած են ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

պահելու դատական շրջապտույտներից, որոնք կարող են առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

Անհրաժեշտ է ընդգծել, որ վարույթն ըստ ընդդատության փոխանցելիս, չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, և պետք է հաշվի առնվի նաև արդարադատության շահը:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ «*1.Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:*

2. Եթե վարույթը վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի հանցանքներին, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը:

3. Եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված՝ ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը:

4. Այլ պետության տարածքում ենթադրաբար կատարված հանցանքի վերաբերյալ վարույթն ընդդատյա է այն դատարանին, որի դատական տարածքում է գտնվում մեղադրյալի բնակության կամ հաշվառման վերջին վայրը, իսկ եթե հնարավոր չի եղել այն պարզել, ապա այն դատարանին, որի դատական

տարածքում է գտնվում մինչդատական վարույթը վերջինս իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը (...)»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(...)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը (...)»:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Էդգար Մերուժանի Եղիգարյանի և Էդուարդ Մանուկի Միրզոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 11-րդ կետերով թիվ 18-0341-23 քրեական վարույթով նախաքննությունն իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում[8],

- տուժողներ Ռ.Մազմանյանի, Ա.Կարապետյանի և վկաներ Կ.Ալեքյանի ու Ռ.Հակոբյանի բնակության վայրը Շիրակի մարզն է, վկաներ Ս.Բալասանյանի և Ա.Ավագյանի բնակության վայրը Երևան քաղաքն է, վկա Ս.Պետրոսյանի հաշվառման վայրը Արցախի Հանրապետությունն է[9],

- Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ մեղադրյալների վերջին հաշվառման վայրը Արմավիրի մարզն է՝ որոշում է կայացրել վարույթն ըստ ընդդատության Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին[10],

- Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, արձանագրելով, որ մեղադրյալներ Է.Միրզոյանի և Է.Եղիգարյանի փաստացի

---

[8] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 5, թերթ 163:
[9] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 5, թերթ 185:
[10] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

բնակության վայրը, մինչև վերջիններիս ձերբակալումը, հանդիսացել է Արարատի մարզը՝ գտել է, որ վարույթն ընդդատյա է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին[11]:

15. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ մեջբերված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է արձանագրել, որ թեև մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր է եղել պարզել Է.Եդիգարյանին և Է.Միրզոյանին մեղսագրվող ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, սակայն մեղադրանքի քննությունը տվյալ տարածքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում անհնարին է: Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն վարույթի տարածքային ընդդատությունը որոշելիս պետք է հիմք ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը, համաձայն որի՝ մեղադրանքը պետք է քննի այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը: Սույն վարույթով մինչդատական վարույթն իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում, որի նստավայրը գտնվում է Շիրակի մարզում:

Վերոշարադրյալի հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով, որ սույն վարույթով տուժողների և վկաների մեծամասնությունը բնակվում է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը, հիմք ընդունելով արդարադատության շահը, փաստում է, որ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՇԴ/0020/01/24 քրեական վարույթն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր չէ:

Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ թիվ ՇԴ/0020/01/24 վարույթն ընդդատյա է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

---

[11] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Էդգար Մերուժանի Եղիգարյանի և Էդուարդ Մանուկի Միրզոյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 11-րդ կետերով թիվ ՇԴ/0020/01/24 քրեական վարույթն ընդդատյա է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Դ.ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ

_____ Ս.ՕՀԱՆՅԱՆ